ISSN 1829-4820

Филиал МГУ им. М.В. Ломоносова
в г. Ереване

№17(21)

Журнал входит в список
периодических изданий ВАК РА

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ
СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ
Научно-методический журнал

MAIN ISSUES
IN MODERN RUSSIAN STUDIES
Scientific Methodological Journal

«Наука есть ясное познание истины, просвещение разума»
М.В. Ломоносов, «Риторика» (1748г.)

2026

Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղ

Филиал Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

M. Lomonosov Moscow State University, Yerevan branch

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

17 (21)

ԵՐԵՎԱՆ 2026
ЕРЕВАН 2026
YEREVAN 2026

Երաշխավորվել է տպագրության Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից

Печатается по решению Ученого совета филиала Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

Reprinted by decision of the Academic Council of the branch of the Moscow State University M.V. Lomonosov in Yerevan

«ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» գիտամեթոդական հանդեսի առաքելությունը ՀՀ-ում ռուսագիտության՝ որպես լեզվաբանության ճյուղի մասսայականացումն է, ռուսաց լեզվի ուսումնասիրման նկատմամբ հետաքրքրություն առաջացնելը, օտարերկրյա հետազոտողների ուշադրությունը հայ գիտնականների մշակումներին հրավիրելը, դրանով իսկ հայ ռուսագիտության մասսայականացումն է, համատեղ ծրագրերի, դրամաշնորհների մշակման հնարավորության ընձեռումը, մագիստրոսների ներգրավումը հետազոտական աշխատանքներին:

Назначение научно-методического журнала «**ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ**» рассматривается нами в ракурсе популяризации в РА русистики как отрасли языкознания, привлечения интереса к изучению русского языка, привлечения внимания зарубежных исследователей к разработкам армянских ученых и тем самым популяризации армянской русистики, возможности разработки совместных проектов, грантов и пр., привлечения магистрантов к научно-исследовательской работе.

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ // Научно-методический журнал, №17 (21). / Глав. ред. Саркисян И.Р.; сост.: Акопян А.С. – Ереван: Изд-во МГУ, 2026. – 306 с.

ISSN 1829-4820

*Журнал входит в список периодических изданий **ВАК РА***

ORCID: 0000-0002-4377-1601
ORCID: 0000-0001-9263-6791

© Филиал МГУ им. М.В. Ломоносова в г. Ереване

ЦИФРОВЫЕ ТЕХНОЛОГИИ КАК СОВРЕМЕННЫЕ ИНСТРУМЕНТЫ ОБУЧЕНИЯ АНГЛИЙСКОМУ ЯЗЫКУ

Лусине Степановна Нуриджанян
nurijanyanlusine@yahoo.com

Ст. преподаватель кафедры английского языка,
Государственный университет им. В.Я. Брюсова
Ереван, Республика Армения

АННОТАЦИЯ

Современная жизнь и человеческие отношения уже немыслимы без цифровых технологий. Информационные технологии играют ключевую роль практически во всех сферах экономической деятельности, включая систему образования. Являясь одним из проявлений образования, изучение иностранного языка, значительно облегчается благодаря цифровым технологиям и интернету. Современные технологии могут быть включены в преподавание английского языка на всех уровнях.
Ключевые слова: цифровые технологии, образование, устный и письменный английский, интернет.

Պատմական այն իրողությունը, որ ժամանակակից կյանքն անհնար է պատկերացնել առանց օտար լեզվի, մասնավորապես՝ անգլերենի իմացության, դարձել է ժամանակի հրամայականը: Սրան համահունչ՝ այսօր նկատվում է բարձրագույն կրթության համակարգի վերակողմնորոշում դեպի նոր արժեքներ, որտեղ օտար լեզվի ուսուցումը՝ անկախ մասնագիտական ընտրությունից, դարձել է գրեթե պարտադիր և անհրաժեշտ: Բարձրագույն դպրոցի շրջանավարտը պետք է լինի մրցունակ և պահանջված, ինչը ենթադրում է նրա ընդհանուր զարգաց-

ման բարձր մակարդակ, տեղեկատվական և հաղորդակցման հմտությունների տիրապետում, ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողություն, նորարար մտածողություն, ինչպես նաև՝ մեկ կամ մի քանի օտար լեզուների իմացություն: Օտար լեզուն այժմ միջմշակութային հաղորդակցության միջոց է, ինչը ենթադրում է օտարալեզու խոսքի ոչ միայն բանավոր, այլև գրավոր ձևի գրագետ իմացություն և արհեստավարժ կիրառում:

Ժամանակին համընթաց՝ կրթական բարեփոխումները ներառում են և պետք է շարունակեն ներառել ուսուցման նոր մեթոդներ՝ հաշվի առնելով ժամանակակից երիտասարդության առանձնահատկություններն ու կյանքի նոր ընթացքը: Մանկավարժական գործունեությունը պետք է լինի նորարարական, քանի որ այն ցանկացած ուսումնական հաստատության հաջող ուսումնական գործունեության կարևոր գործոններից է: Նորարարական գործունեությունը հիմք է ստեղծում կրթական ծառայությունների շուկայում տվյալ ուսումնական հաստատության մրցունակության ստեղծման համար, ինչպես նաև՝ նպաստում թե՛ դասավանդողների, և թե՛ սովորողների մասնագիտական աճին և նրանց փոխհամաձայնեցված գործունեությանը: Մյուս կողմից, նորագույն տեխնոլոգիաների ներառումը կրթական գործընթացի մեջ հնարավոր է դարձնում ուսուցման գործընթացը տեսական դաշտից տեղափոխել գործնական դաշտ, ինչը թույլ է տալիս նյութի առավել ճիշտ և տեսանելի մատուցում, հնարավորինս հեշտ և արագ ամրապնդում և գործնական կիրառություն:

Բազմաթիվ են անդրադարձերն ու տեսակետները *տեխնոլոգիա – կրթություն* զույգի կապի և դրա կարևորության հետ կապված, և մեր կողմից դիտարկված բոլոր օրինակները հիմնականում դրական են: Խոսելով մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների մասին՝ ռուս գիտնական, լեզվաբան Բ. Լիխաչևը դրանք որակում է իբրև «հոգեբա-

նական և մանկավարժական մոտեցումների մի համակարգ, որ որոշում է ձևերի, ուսուցման մեթոդների հատուկ շարք և դասավորություն, որոնք ձևավորում են մանկավարժական գործընթացի կազմակերպչական և մեթոդական մոտեցումները» [7]: Մեկ այլ լեզվաբան՝ Ի. Վոլկովը, նշում է, որ «մանկավարժական տեխնոլոգիան ծրագրված ուսումնական արդյունքներին հասնելու գործընթաց է» [6]:

Այսպիսով, մարդկային կյանքի տարբեր բնագավառները, այդ թվում՝ ուսուցման գործընթացը, անդառնալիորեն առնչվում են մի նոր՝ թվային դարաշրջանի հետ, որտեղ հասարակական կյանքն ու հարաբերությունները կազմակերպվում են բոլորովին նոր չափանիշներով:

Մի քանի հիմնական բնութագրեր տարբերակում են թվային դարաշրջանը նախորդ դարաշրջաններից: Նախ, ամենուր տարածված և հասանելի կապը դարձել է թվային հասարակության բնորոշ գիծը, որտեղ մարդիկ ակնթարթորեն մուտք ունեն տեղեկատվական և հաղորդակցման ուղիների հսկայական ցանցեր: Երկրորդ, թվային սարքերի տարածումը, սկսած սմարթֆոններից և պլանշետներից մինչև համակարգիչներ և նոութբուքեր, ապահովել է տեխնոլոգիայի անխափան ինտեգրումը առօրյա կյանքում: Բացի այդ, թվային դարաշրջանը բնութագրվում է տեղեկատվության համամարդկայնացմամբ, որտեղ մարդը համաշխարհային բովանդակություն ստեղծելու, համատեղ օգտագործելու և սպառելու ներուժ ունի: Ավելին, տեխնոլոգիական նորարարությունների արագ տեմպերը սահմանում են թվային տեխնոլոգիաների տարածականության զարգացման ընթացքը, ինչը պահանջում է շարունակական հարմարվողականություն և ուսուցում:

Օտար լեզվի գործընթացում թվային տեխնոլոգիաների ներառումը թույլ է տալիս ապահովելու մի շարք խնդիրների լուծում, ինչպիսիք են.

- անգլերենի բազմամակարդակ և հասանելի դասընթացների կազմակերպում և անցկացում,
- համակարգչային թեստավորում,
- շնորհանդեսների և տեսադասերի կազմակերպում և անցկացում,
- հեռավար ուսուցում՝ ներառելով բոլոր տեսակի կրթական գործընթացները *առանց դասավանդող – սովորող* օղակի անմիջական շփման,
- ձայնային չատ, որն ապահովում է հնչյունաբանության արագ և արդյունավետ ուսուցում,
- լինգոֆոնային սարքավորումներ, որոնք, բաժանվում են աուդիոակտիվ, աուդիոպասիվ և աուդիո-համեմատական տարատեսակների [3]:

Աուդիոպասիվ սարքավորումները թույլ են տալիս սովորողին միայն լսելու նյութը, աուդիոակտիվ սարքավորումների դեպքում սովորողը կարողանում է լսելուց բացի նաև կրկնել տրված նյութը, իսկ աուդիո-համեմատական սարքավորումների պարագայում սովորողը հնարավորություն է ստանում ձայնագրելու իր խոսքը կամ ընթերցածը և վերջինս համեմատել էլեկտրոնային տարբերակի հետ:

Խոսելով կրթության ոլորտում թվային տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունների մասին՝ չպետք է մոռանալ նաև այն հնարավոր խնդիրներն ու վտանգները, որ կարող են ի հայտ գալ այդ ընթացքում: Թվայնացված կրթության առաջնային խնդիրներից մեկը տեխնոլոգիաներից չափազանց մեծ կախվածությունն է, ինչը կարող է հանգեցնել սովորողների քննադատական մտածողության, ստեղծագործելու հմտությունների և խնդիրներ լուծելու կարողությունների նվազմանը: Մյուս կողմից, տեխնիկական անսարքությունները, կամ կապի հետ խնդիրները կարող են խաթարել ուսումնական գործունեությունը

և դասապրոցեսը: Ավելին, թվային կրթությունը կարող է հանգեցնել նաև սովորողների սոցիալական մեկուսացման և միջանձնային շփումների նվազման: Առցանց ուսուցման պայմաններում սովորողները կարող են չունենալ անմիջական համագործակցության հնարավորություններ, ինչը հանգեցնում է մեկուսացման: Թվային կրթության մեկ այլ խնդիր է էկրանի բացասական ազդեցությունը սովորողների առողջության վրա: Էկրանի դիմաց անցկացրած չափազանց շատ ժամանակը կարող է հանգեցնել մի շարք առողջական խնդիրների՝ աչքի լարվածություն, գլխացավ, ողնաշարի խնդիրներ և այլն:

Այդուհանդերձ, հաշվի առնելով թվայնացված կրթության հարուցած խնդիրներն ու հնարավոր բացերը, անհրաժեշտ է քայլել ժամանակին համընթաց և փորձել գտնել կրթության և թվային տեխնոլոգիաների լավագույն աղերսները, ինչի արդյունքում կշահի թե՛ դասավանդողը, թե՛ սովորողը, հետևաբար, կբարձրանա կրթության որակը:

Օտար լեզվի ուսուցումը ընդգրկում է չորս հմտությունների վարժանք և բարելավում՝ ունկնդրում, արտասանություն, ընթերցում և գրավոր հմտություն (listening, speaking, reading and writing): Առաջին երկուսի պարագայում մեծ է համակարգչի և թվային մյուս տեխնոլոգիաների դերն ու ավանդը:

Հետևաբար, այսօր դժվար է պատկերացնել անգլերենի և մյուս լեզուների բանավոր ձևի լավագույն ուսուցումը առանց համացանցի և տեխնոլոգիական սարքավորումների: Եթե առաջ սովորողը հենվում էր բացառապես դասավանդողի հմտությունների ու արհեստավարժության վրա՝ փորձելով նմանվել նրա արտասանական տեխնիկային, ապա այսօր ընտրության հնարավորությունը համացանցում հսկայական է: Կարելի է տեսնել ու լսել տարբեր լեզվակիրների խոսքը, ծանոթանալ նրանց կյանքին ու կենցաղին, լեզվամշակույթին՝ առանց այդ երկիրն այցելելու: Ավելին, այսօր հնարավոր է անգամ սովորել օտար լեզու՝

առանց ուսուցչի կամ դասախոսի անմիջական ներկայության: Ուսուցումը կարելի է կազմակերպել հեռավար՝ մասնագետի ուղղորդմամբ կամ պարզապես լեզվակիրների խոսքի ունկնդրմամբ (կարճատև տեսանյութեր, ֆիլմեր, խաղեր, երգեր և այլն): Ուսուցման այս մեթոդներն առավել գործնական են և արդյունավետ, քան ուսուցանվող լեզվից ու մշակույթից կտրված մասնագետի վարած դասը, ինչը շատ հաճախ հանգեցնում է առոգանության խնդրի առաջացման, կաշկանդվածության, նորաբանություններին անտեղյակության և նմանատիպ այլ խնդիրների:

Այսպիսով, համակարգչի օգնությամբ կարելի է շատ արագ յուրացնել.

- միևնույն բառիմաստի ամերիկյան – բրիտանական տարբերակները, օրինակ՝ flat – apartment, pavement – sidewalk, metro – underground, fall – autumn, trousers – pants և այլն,
- նույն բառի բրիտանական և ամերիկյան ձևափոխված տարբերակները, օրինակ՝ because – cause, colour – color, favourite – favorite, centre – center,
- ժամանակակից հապավումներ, օրինակ՝ IDK (I don’t know), ASAP (as soon as possible), OMG (Oh, my God!), Ty (Thank you), LMK (Let me know),
- ժամանակակից արտահայտություններ, օրինակ՝ I feel blue! (I’m sad), It’s my bad! (I’m sorry), It’s a piece of cake! (It’s easy), It’s on me! (I’ll pay),
- տարածված արտահայտություններ, օրինակ՝ hold on – wait, put away – postpone, call on – visit, head to – move, go և այլն,
- բառակապակցական բայեր, օրինակ՝ twist off, crack open, peal out:

Անդրադառնալով անգլերենի գրավոր ձևին՝ մեջբերենք լեզվաբան Գ. Ռոգովայի կարծիքը. «այն օգնում է աշակերտներին զարգացնելու

իրենց արտասանության, խոսելու և ընթերցելու հմտությունները, օգնում է յուրացնել անգլերենի տառերը, հնչյունները, բառապաշարն ու քերականությունը» [8: 197]:

Լեզվի գրավոր և բանավոր տարբերակները հաղորդակցման տարբեր ձևեր են որոնցից յուրաքանչյուրն ունի իր գործունեության և բնորոշ հատկանիշների ուրույն համակարգը: Հաղորդակցման այս երկու՝ գրավոր և բանավոր տարատեսակների համեմատական զուգադրումը լավագույնս տվել է լեզվաբան Ս. Բեռլիզոնը՝ նշելով. «խոսքը երկկողմանի մարդկային շփում է, որտեղ դուք շարունակաբար ազդեցություն եք կրում ձեր զրուցակցից, մինչդեռ գրելիս չկա փոխազդեցություն, ոչ մի ազդակ ուրիշներից, և դուք մենակ եք» [5: 3]:

Անգլերենի գրավոր հմտությունների ուսուցմանն անցնելիս պետք է հաշվի առնել այն փաստը, որ «գրավոր հմտությունը (writing) ամենահեշտ, բայց միաժամանակ ամենադժվար արվեստն է» [1: 7]: Այն հեշտ է, քանի որ գրավոր խոսքի գործիքներն ու կազմության միջոցները ծանոթ և հասանելի են բոլորին: Այն նաև ամենադժվարն է ու պատասխանատուն, քանի որ սովորողը պետք է տիրապետի այն բոլոր օրենքներին ու կանոններին, որ անհրաժեշտ են տվյալ լեզվով գրագետ գրելու համար:

Հարկ է նշել նաև, որ գրավոր անգլերենի ուսուցումը պետք է արվի քայլ առ քայլ, և այստեղ համակարգիչը և թվային տեխնոլոգիաների ժամանակակից տարատեսակները կարող են դառնալ «լավագույն» և «համբերատար» օգնականները: Միևնույն նյութը կարելի է դիտել և կրկնել մի քանի անգամ՝ թե լսարանում (դասարանում), թե տանը: Այս փուլը կարելի է արագ հաղթահարել՝ օգտվելով համակարգչային դասերից՝ արտագրության կամ թելադրության եղանակով, դիտելով տեսադասը:

Անգլերենի դասավանդումը՝ օրինակ հայալեզու աշակերտներին, պետք է կազմակերպել՝ հաշվի առնելով երկու լեզուների հնչյունական համակարգերի առանձնահատկությունները.

- միևնույն տառի անգլերեն տարատեսակը (միակ տառը, որ գրելաձևով նույնն է, օ-ն է:): Օրինակ՝ բ – b, փ – p, դ – d, մ – m,
- հնչյուններ, որ չկան հայերենում, ինչպես տրված բառերի ընդգծված մասերում է՝ <u>th</u>ink, <u>th</u>is, m<u>a</u>p, morni<u>ng</u>,
- հնչյուններ, որ բացակայում են անգլերենում և դրանց հնարավոր համարժեքները, օրինակ՝ խ – kh, ղ – gh, ծ – ts:

Անգլերենի ուսուցման հաջորդ փուլը ուղղագրությունն է: Այստեղ հարկ է առանձնացնել մի շարք բարդություններ, որոնք առավել տեսանելի և պատկերավոր կլինեն և հեշտությամբ կմտապահվեն, եթե դրանց ուսուցումը կազմակերպվի համակարգչային խաղերի, ուսուցողական հոլովակների միջոցով.

- միևնույն տառը տարբեր բառերում տարբեր կերպ է կարդացվում: Օրինակ ***k*** տառը *keep* և *asked* բառերում, ***a*** տառը *jar* և *game* բառերում, ***g*** տառը *big – page* բառազույգում, ***c*** տառը *city – country* բառերում,
- սրան հակառակ՝ տարբեր տառեր կամ տառերի համակցություններ տարբեր բառերում կարող են ընթերցվել նույնակերպ: Օրինակ՝ *pale – pail, flour – flower*, *tale – tail,*
- շատ տառեր, որ ընթերցվում են բազմաթիվ բառերում, կարող են համր լինել որոշ բառերում: Օրինակ՝ *<u>h</u>ave – <u>h</u>our, <u>b</u>ark – thum<u>b</u>, <u>g</u>rass – bou<u>g</u>ht, boo<u>k</u> – <u>k</u>now, <u>t</u>ake – lis<u>t</u>en*:

Ուղղագրության փուլը հաղթահարելուն և բառապաշարը հարստացնելուն դարձյալ մեծապես կարող են նպաստել թվային տեխնոլոգիաները՝ արագացնելով ու հեշտացնելով տարաբնույթ առաջադրանքների

կազմումը: Սովորողներին կարելի է տալ առաջադրանքներ, որ կատարվում են համակարգչով.

- թելադրություն՝ ունկնդրելով անգլերեն լեզվակրի խոսքը,
- առաջարկվող տարբերակներից ճիշտ բառի ընտրություն, օրինակ՝
  The woman *broke / has broken* her favourite vase yesterday.
- բաց թողնված բառի տեղադրում, օրինակ՝
  He … into his car and drove away.

Ուղղագրություն և քերականություն (Spelling & Grammar) գործիքի օգնությամբ կարելի է տեղում, համակարգչով հավաքված տեքստում գտնել և ուղղել ուղղագրական սխալներն ու քերականական բացթողումները:

Անգլերենի ուսուցման հաջորդ փուլը քերականության յուրացումն է և նախադասությունների կազմումը: Դասապրոցեսը էլ ավելի արդյունավետ կդառնա, եթե ուսուցումը կազմակերպվի և ստուգվի համակարգչով (կամ թվային այլ տեխնոլոգիայով): Այստեղ կօգնեն հետևյալ վարժությունները.

- խառը բառերով նախադասությունների կազմում, օրինակ՝
  Last, Mary, best, and, the, did, week, passed, her, exam.
- նախադասությունների հավելումը անհրաժեշտ բառով, օրինակ՝
  She … the cup and broke it into pieces (put, fall, dropped).
- հարցերի պատասխանում, օրինակ՝
  Where are your parents from?
  Who can be regarded as your best friend?
  What can you see around you?

Օտար լեզվի, այդ թվում և անգլերենի, ուսուցման հաջորդ փուլը պարբերությունների կազմելն է, որին հաջորդում է ամբողջական տեքս-

տերի ստեղծումն ու վերարտադրումը: Այս դեպքում սովորողին ուսուցանվում է խառը նախադասություններից ստանալ ճիշտ և իմաստալից պարբերություն, տալ տրված պարբերության շարունակությունը և այլն: Կարելի է որևէ հոլովակ բաժանել հատվածների և սովորողին առաջարկել դասավորել դրանք ճիշտ հերթականությամբ: Հաջորդիվ ուսանողը կարող է ունկնդրել կամ դիտել նյութը և շարադրել դրա վերջաբանը՝ իր պատկերացմամբ:

Այսպիսով, անգլերենի ուսուցման գլխավոր նպատակը հաղորդակցական հմտությունների ձևավորումն ու զարգացումն է: Լեզուն ուսումնասիրելիս շեշտը դրվում է նյութի ընկալման, բովանդակության փոխանցման վրա, որն էլ հանգեցնում է լեզվի բառաքերականական պաշարի ձեռքբերմանը:

Որպես տեղեկատվական համակարգ՝ համացանցն իր օգտատերերին առաջարկում է պաշարների հսկայական տեսականի, որից կարող են օգտվել նաև ուսանողները՝ նյութեր որոնելու, դրանց վրա աշխատելու և էլեկտրոնային փոստով դասավանդողին ուղարկելու նպատակով: Դրանք են.

- էլեկտրոնային փոստ (email), հեռակոնֆերանսներ,
- տեղեկատվություն հրապարակելու, անձնական էջ ստեղծելու հնարավորություն,
- տեղեկատվական հարթակներ (Yahoo, Infoseek or UltraSmart, LookSmart),
- որոնողական համակարգեր (Vista, Open Text, Exite),
- առցանց հաղորդակցություն (Chat) և այլն:

Մեր օրերում հաղորդակցական հմտություններ ձեռք բերելն անհնար է առանց համացանցային պաշարների ճիշտ օգտագործման և օտար լեզվի դասընթացում դրանց կիրառման: Համացանցի վիրտուալ

միջավայրը թույլ է տալիս դուրս գալ ժամանակի ու տարածության կապանքներից և տեղում ապահովել կենդանի շփում:

Համացանցը հոյակապ միջոց է աշխարհում կատարվող և կատարված իրադարձություններին հետևելու համար՝ ներառելով մեծածավալ նյութեր, որոնք նպաստում են ինչպես լեզվական հմտությունների, այնպես էլ սովորողների սոցիալ-հոգեբանական հատկանիշների, նրանց ինքնավստահության և թիմում աշխատելու կարողությունների զարգացմանը:

Կրթության ոլորտում թվային տեխնոլոգիաների տեղին ու դերին անդրադառնալով՝ հայտնի պարբերականներից մեկն նշում է. «այս տեխնոլոգիաները հզոր ազդեցություն են թողել կրթական համակարգի վրա: Վերջին COVID–19 համաճարակն էլ ավելի է կարևորել թվային տեխնոլոգիաների կիրառումը կրթության մեջ» [2]: Եվ պատմականորեն դժվարին ժամանակներում էլ ավելի ընդգծվեց և կարևորվեց թվային տեխնոլոգիաների հսկայական դերը կրթության ոլորտում: Աշխարհը շարունակեց իր բնականոն գործունեությունը, կրթական համակարգը շարունակեց առաջ ընթանալ շնորհիվ այս տեխնոլոգիաների: Ավելին, ճգնաժամային իրավիճակը, ֆիզիկական ակտիվության ու տեղաշարժման սահմանափակումը ստեղծեցին նոր գաղափարների, հանգեցրեցին նոր լուծումների, որոնք էլ հաջողությամբ իրագործվեցին համակարգչի և մյուս սարքավորումների շնորհիվ՝ համացանցի օգնությամբ:

Կրթության տեխնոլոգիական բարեփոխումները զգալիորեն հեշտացրել են ուսանողների կյանքը: Թուղթ ու գրչին այսօր փոխարինում են տարբեր ծրագրեր ու գործիքներ՝ շնորհանդեսներ ու նախագծեր ստեղծելու համար: Էլեկտրոնային գիրքն ավելի հեշտ կիրառելի է, հասանելի ու համընդհանուր, այփադը նոթատետրից համեմատաբար ավելի թեթև է: Կյանքն ու կրթությունն այլևս անհնար է պատկերացնել առանց տեխնոլոգիաների ու համացանցի:

Ստեղծված պայմաններում, վերոնշյալ հանգամանքներից ելնելով, ի հայտ է եկել մեկ այլ հասկացություն՝ կրթության միջազգայնացումը [4: 10]: Թվային տեխնոլոգիաները, մի կողմից, և հասանելի, համընդհանուր կապը, մյուս կողմից, հնարավոր դարձրեցին դրա կայացումն ու հետագա զարգացումը: Միջազգային կրթությունը հնարավորություն ընձեռեց յուրաքանչյուրին ոչ միայն ստանալ կրթություն այլ երկրում, այլև ստացած գիտելիքներով, հմտություններով մտնել միջազգային մրցունակ աշխատաշուկա:

Այսպիսով, թվային տեխնոլոգիաների զարգացումով մարդկային կյանքը մտել է մի ուրույն փուլ՝ հասնելով որակական մի նոր աստիճանի: Կյանքը զգալիորեն հեշտացել է, ինչի արդյունքում կրթությունը դարձել է առավել մատչելի: Տեխնոլոգիական հոսանքին համընթաց՝ փոխվել է նաև օտար լեզու սովորելու գործընթացը: Շնորհիվ թվային տեխնոլոգիաների՝ անգլերենի ուսուցումն այսօր առավել գործնական է և արդյունավետ, ինչն էլ հեշտացրել է լեզուն յուրացնելու, դրան տիրապետելու գործընթացը:

ЛИТЕРАТУРА

1. *Allen E.F.* How to write and speak effective English. – New York: Fawcett; Thorsons, 1959. – 208 p.
2. *Haleem A., Javaid M., Qadri M.A., Suman R.* Understanding the Role of Digital Technologies in Education: A Review // Sustainable Operations and Computers, 2022, Vol. 3. – PP. 275–285. – DOI: 10.1016/j.susoc.2022.05.004.
3. *Maley A., Duff A.* Drama Techniques: A Resource Book of Communication Activities for Language Teachers, Third edition. – Cambridge, Cambridge University Press, 2005. – 246 p.
4. *Marinoni G., Bartolome S., Cardona P.* Internationalization of Higher Education: Current Trends and Future Scenarios, 6th IAU Global Survey Report, 2024. – 266 p. [Electronic resource]. – Mode of access: https://static1.squarespace.com/sta-

tic/64ca66e5f086975ce8783d53/t/661f9bed86d6393d1ec26f75/1713347572513/2024_internationalization_survey_report_digital.pdf (Date of access: May 1, 2026).
5. *Берлизон С.Б., Чапник Е.И.* Пособие по письменной практике (на английском языке). – Л.: «Просвещение», 1976. – 223 с.
6. *Волков И.П.* Цель одна – дорог много: Проектирование процессов обучения: Кн. для учителя: Из опыта работы / И.П. Волков. – М.: Просвещение, 1990. – 159 с.
7. *Лихачев Б.Т.* Педагогика: Курс лекций: Учеб. пособие для студентов ВУЗов и слушателей ин-тов и фак. повышения квалификации и переподготовки науч.-пед. кадров / Б.Т. Лихачев. – 2-е изд., испр. и доп. – М.: Прометей: Юрайт, 1998. – 462 с.
8. *Рогова Г.В.* Методика обучения английскому языку (На англ. языке): Учеб. пособие для пед. ин-тов и фак. иностр. яз. – Л.: «Просвещение», 1975. – 312 с.

ԹՎԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ՝ ԻԲՐԵՎ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՋՈՑՆԵՐ

Լ.Ս. Նուրիջանյան
nurijanyanlusine@yahoo.com

Անգլերենի ամբիոնի ավագ դասախոս,
Վ.Յա. Բրյուսովի անվ. պետական համալսարան
Երևան, Հայաստանի Հանրապետություն

ԱՄՓՈՓՈՒՄ

Ժամանակակից կյանքն ու մարդկային հարաբերություններն այլևս անհնար է պատկերացնել առանց թվային տեխնոլոգիաների: Տնտեսական գործունեության գրեթե բոլոր ոլորտներում, այդ թվում և կրթության համակարգում, ինֆորմացիոն տեխնոլոգիաները առանցքային դեր են խաղում: Լինելով կրթության դրսևորումներից մեկը՝ օտար լեզվի ուսուցումը մեծապես հեշտանում է՝ շնորհիվ թվային տեխնոլոգիաների ու համացանցի: Նորագույն տեխնոլո-

գիաները կարելի է ներառել անգլերենի բոլոր մակարդակների ուսուցման մեջ՝ բանավորից մինչև գրավոր:
Բանալի բառեր՝ թվային տեխնոլոգիաներ, կրթություն, բանավոր և գրավոր անգլերեն, համացանց:

DIGITAL TECHNOLOGIES AS MODERN TOOLS FOR TEACHING ENGLISH

L. Nurijanyan
nurijanyanlusine@yahoo.com

Senior Lecturer at the Department of English,
Brusov State University
Yerevan, Republic of Armenia

ABSTRACT

Modern life and human relations are no longer imaginable without digital technologies. Information technologies play a key role in almost all areas of economic activity, including the education system. Being one of the manifestations of education, learning a foreign language is greatly facilitated thanks to digital technologies and the Internet. The latest technologies can be incorporated into the teaching of English at all levels and stages, from oral to written.
Keywords: digital technologies, education, oral and written English, Internet.

Информация о статье:
статья поступила в редакцию 02 мая 2026 г.,
подписана к печати в номер 17 (21) / 2026 – 25.06.2026 г.

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

Главный редактор

Саркисян И.Р. – д.п.н., профессор, профессор кафедры русского языка и профессиональной коммуникации Института филологии и межкультурной коммуникации Российско-Армянского университета, заслуженный профессор РАУ.

ORCID: 0000-0002-4377-1601
SPIN-код: 8936-7319, AuthorID: 1056296

Составитель, технический редактор, вёрстка и дизайн

Акопян А.С. – ст. преподаватель кафедры русского языка и профессиональной коммуникации Института фи-лологии и межкультурной коммуникации Российско-Армянского университета; ст. преподаватель Санкт-Петербургского политехнического университета Петра Великого (СПбПУ); доцент Медицинского института имени Меграбяна; Действительный член (академик) Международной Академии Нейронаук (МАН, РА).

ORCID: 0000-0001-9263-6791
SPIN-код: 1465-8539 / Author ID: 1045228

Корректоры:
Акопян А.С., Согомонян М.Р., Мурадян К.Г.

Адрес Редакции научных изданий
Филиала Московского государственного университета
им. М.В. Ломоносова в г. Ереване:
0025 РА, г. Ереван, ул. Вардананц 17
e-mail: po@msu.am

Заказ № 25
Подписано к печати – 28.06.2026 г.
Формат 60x84$^{1}/_{16}$. Бумага офсетная № 1.
Объем – 19,125 печ. л. Тираж 250 экз.